

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՅՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑՔ

ԵՒ

ՆՐԵ ԶԵՐԳԵՅՄԱՆ ՑՐՁԱՆԵՐԸ

(Շարունակականթիւն:)

§ 46. Յունաբան համարական հայութեածների լուրդանական բառեալուն շահագոյն մշակութեածների լուրդանական բառեալուն: — Յունաբան հայութեածները մանութիւնները ծագել են, ինչպէս տեսանք, ոչ թէ միասնաբար ու միաժամանակ վեցերորդ, եօթներորդ կամ ութերորդ դարում, այլ զանազան ժամանակաշրջաններում, եւ բաժանւում են երեք տարբեր շերտերի: Արդ՝ այս հիմնական եղանակացութեանը յանդելուց յետոյ, կարծում եմ, որ դժուար չէ բացատրել նրանց մէջ հանդիպող համանման հատուածների թարգմանութեան այն կապն ու առընչութիւնը, որ նկատուած են մասամբ բանասիրական նորագոյն աշխատութիւններում: Համանման այդ հատուածներն են.

1. Սահմ., 165, 16—19.

Պիտ., 360, 20—21

“Որպէս եւ Թէոդնիս

յայտ առնէ ցոմն Սկիւռնոս

ասելով՝ թէ պարտ է յաղը ասելով՝ թէ պարտ է յաղը ասութեանէ փախչել եւ ի թենէ փախչել, եւ ի մածն միծահիտեղն անկանել ծով, անկանել ծով եւ կամ ի վիմաց, Սկիւռնէ, հու վիմաց հոսիլ ի բարձանցո, սիլ յարեգակնակոխ,”¹:

Եթէ չեմ սխալում յունաբէն համանման այս հատուածների տարբեր թարգմանութիւնը մատնաշուած է Արդ. Բառումքարանների Ծեր ծարքահանութեան մէջ²: Գիրախտաբար, այդ աշխատութիւնը չունեմ այժմ ձեռքիս տակ: Ամենառաջագրաւն է այս հատուածներում յունաբէն դիլիթուս բառի տարբեր թարգմանութիւնը՝ արեգակնակոխ եւ բարձր: Ալիքատոս այս բառը, ինչպէս յայտնի է, հաս-

¹ Այս հատուածի յունաբէն բնագիրը աւու Դավ. Prolegom., էջ 32 19—23:

“Ως καὶ ὁ Θέογνις τοῦτο δηλοῖ πρὸς Κύρον τινά οὕτω λέγων·

Χοὴ πενίην φεύγοντα καὶ ἐσ μεγακήτεα πόντον
‘Ρίπειν καὶ πετρῶν, Κύρε, κατ’ ἡλιβάτων”.

² Տես Զետշրիֆտ der Deutschen Morgenländischen Gesellschaft, 1886, էջ 457—515:

կացուել է յունաբէնում երկու տարբեր իմաստով՝ կամ իբրեւ դիլիթուս անմատչելի խիստ բարձր, եւ կամ իբրեւ դիլիթուս = “արեգակնակոխ”, արեգակնակոխ¹: Արդ՝ “Յաղագս զիտոյից, երկի թարգմանն այդ բառը հասկացել է առաջին իմաստով, իսկ Սահմանքի թարգմանը՝ երկրորդ իմաստով: Աւելի քան պարզ է, որ այդ թարգմանները պէտք է լինեն տարբեր անձնաւորութիւններ: Արդ՝ քանի որ սոյն իմ աշխատութեան մէջ ցոյց է տրուած արդէն, որ “Յաղագս զիտոյից գրուածքը յունաբան առաջին շերտի թարգմանութիւն է, իսկ Սահմանքը՝ երրորդ շերտի, եւ որ այդ թարգմանութիւնները ծագել են տարբեր ժամանակաշրջաններում, շատ պարզ ու հասկանալի է այժմ” թէ այդ թարգմանութիւնների եւ թէ դրանց թարգմանիչների իրարից տարբեր լինելը, եւ այդ ինդիրը պէտք է համարել ըստ իս վերջնականապէս լուսաբանուած ու լուծուած:

2. Մի ուրիշ նոյնքան հետաքրքրաշարժ հատուած մատնացոյց է արել Նիկ. Աղոնցն իլ “Արուեստ Դիլոնիսեայ քերականին աշխատութեան մէջ”.

Սահմ., էջ 182, 9—11.

Թուակ., էջ 42, 15—18.

“Երհեստ է՝ բաղկացութիւն ի հասողութենէ թիւն ի թողմանէ նախակրթեալ առ ի պիտանացու իր հուն կատարում, որ ի կննցակնումն”².

Խկապէս՝ այս հատուածը ու թէ թրակացու քերականութեան հայերէն բնագրի մէջ է գտնուում, այլ Դաւթի փիլիսոփայի քերականի մէկնութեան մէջ³, սակայն Նիկ. Աղոնցը կարծում է, որ նոյն հատուածը եղած պիտի լինի թրակացու քերականութեան յաւելուածում, որտեղից եւ, հաւանաբար, քաղել է Դաւթի փիլիսոփան: Արդ՝ այս հատուածում ուշագրութեան արժանի է, ամենից առաջ, ինչպէս շատ ուղիղ դիմել է Նիկ. Աղոնցը, չառական յունաբէն բառի տարբեր թարգմանութիւնը՝ հասողութիւն եւ թողումն: Սահմանքի թարգմանը չառականի:

¹ Տես Dr. W. Pape's Griechisch-Deutsches Handwörterbuch, Bd. I, 1888, էջ 1161:

² Յունաբէն բնագիրը աւու Դավ. Proleg., էջ 144 5—6. “τέλην ἐστὶ σύστημα ἐκ καταλήψεων ἐμπειρικά συγγεγομμασένη πρός τι τέλος εὐχρηστον τῶν ἐν τῷ βίῳ, ον

³ Նիկ. Աղոնց, Արուեստ Դիլոնիսեայ քերականի, էջ 80:

բառը հասկացել է չառալարվանքուն = հասկանալ, հասու լինել բայից, իսկ միւս թարգմանը՝ չառալենքուն = թողուլ բայից: Միանդամայն պարզ է, ինչպէս եւ ճիշտ եղակացնում է նիկ. Աղոնցը, որ այս հատուածների թարգմանները պէտք է լինեն տարբեր անձնաօրութիւններ: Ասկայն նիկ. Աղոնցը ենթադրում է միեւնոյն ժամանակ, որ այդ թարգմանութիւնները մասնաւասիսն, որ կարող են լինել միեւնոյն գրական դպրոցի արտադրութիւն: Այս ենթադրութիւնն ըստ իս պէտք է համարել այժմ անընդունելի, քանի որ գիտենք արդէն, որ Սահմանքը եւ թրակացու քերականութիւնը տարբեր ժամանակի ու յունարան տարբեր դպրոցների թարգմանութիւններ են:

Յ. Ելիասը եւս իր Ստորոգութեանց մեկնութեան մէջ ունի երկու հատուած, որ գտնում են նաեւ թրակացու քերականութեան մէջ:

Թրակ. 15, 23, 16, 6.

Ելիաս, 55, 2-6.

“Եւ ոչ զքերդող պարտ չնդունել, որք հակործ զարանունն անուանականաց եւ բյականաց: Քանզի է Փափկանէս ի առածածնէս յաստուծուծոյ. իսկ բայականք՝ ի սիրելոյ սիրեմ եւ յիմանալոյ իմաստուն զոր պարտ է զամենական յարանունս կոչել. իսկ նորա զմանս անուանական կոչն եւ զմանս բայականուն”:

Թրակ., 19, 9-12.

Ելիաս, 51, 21-24.

“Եւ կամ ըստ իրաց հաղողին եւ ըստ անուան զամանակին, եւ լինին բաշխունելոն՝ որպէս խաղ, դաշպար, մարտացու, վազակոր, սուսեր, նրանուն”:

Նիկ. Աղոնցը, որ վերոյիշեալ իր աշխատութեան մէջ քննութեան է առել այս հատուածները (Էջ CLXX-CLXXXII), մատնանիշ է անում, որ յունարէն թէան եւ Թքչան անուններն ելիասի մեկնութեան մէջ թարգմանուած են: Աստուածանէս եւ Փափկանէս, իսկ թրակացու քերականութեան մէջ՝ Տիրիձան եւ Խրախման: Բայց յունարէն էիցօչ, բաշարա, ուռաջդիր, ձօր եւ

գածշառութառերը թարգմանուած են թէ Ելիասի եւ թէ թրակացունոյն երկերում միատեսակ՝ դաշլապը, մարտացու, սուսեր, խաղ եւ նրան: Նիկ. Աղոնցի կարծիքով, երկրորդ հատուածում բառացի այդ նմանութիւնը կարելի է բացատրել երկու կերպ՝ կամ թարգմանութիւնները միեւնոյն անձի աշխատութիւն են եւ կամ Ելիասի թարգմանը օգտուած պիտի լինի թրակացու քերականութեան հայերէն թարգմանութիւնից: Ինչ վերաբերում է թէան եւ Թքչան անունների տարբեր թարգմանութեան, նիկ. Աղոնցը հնարաւոր է համարում, որ միեւնոյն թարգմանը նոյն անունները կարող էր թարգմանել մի գէպ-քում՝ Տիրիձան ու Խրախման, կամենալով հայացնել յունական այդ անունները, իսկ մի այլ գէպ-քում՝ Աստուածանէս եւ Փափկանէս, աշխատելով պահէլ նոյն անուններն անփոփոխ՝ համապատասխան յունարէն բնագրին: Կարեւոր այս ինդղի վերանական լուծումը նա թողնում է անորոշ մինչեւ որ երեւան կը գան նոր փաստեր ու տուեալներ, որոնք ցոյց կը տան Ելիասի թարգմանչի կախումը թրակացու քերականութեան թարգմանութիւնից:

Քանի որ սոյն իմ աշխատութեան մէջ ցոյց տրուեց արդէն, որ թրակացու քերականութիւնը յունարան առաջին շերտի թարգմանութիւններից ամենահինն է, մինչդեռ Ելիասի Ստորոգութեանց մեկնութիւնը որոշուեց, որպէս յունարան դպրոցի երրորդ շերտի աշխատութիւն, թարգմանուած շատ աւելի ուշ՝ մի այլ ժամանակաշրջանում, ուստի խօսք անդամ չկ կարող լինել, որ թրակացու քերականութեան ու Ելիասի Ստորոգութեանց մեկնութեան թարգմանները լինեն միեւնոյն անձը:

Ըստ երեւոյթին, բազմանուն կամ փաղանուն գաղափարի սահմանան համար ընդհանուր ընդունուած բացատրութիւն է համարուել, թրակացու քերականութեան ազգեցութեամբ, “խաղ, գալարը, մարտացու, վաղակաւոր, սուսեր, նրանուն” վերոյիշեալ օրինակը: Նոյն այդ օրինակը ծանօթ է եղել նաեւ Այօլ էր նրանուն թարգմանչին, որը խօսելով գրոց մեկնութեան թարգմանչին, ասում է՝ “Իսկ ի բազմանունութենէ, որպէս եւ սուսերն եւ նրան միեւնոյն ելով՝ զանազան զմանէ ստորոգին անուանը (Էջ 498, 9-11): Այս ընդհանուր օրինակը ցոյց է տալիս միայն, որ յունարան երկրորդ եւ երրորդ շնչանների թարգմանիչները ծանօթ են եղել թրակացու քերականութեան հնագոյն թարգմանութեան, եւ նրանք, ինչպէս տեսանք,

գործ են ածել յաճախ նրա քերականական յա-
տուկ եզրները:

Կարեւորը սակայն էլիասի մեկնութեան
մէջ ոչ թէ այդ նմանութիւններն են, այլ նրա
յունաբան լեզուի ու քերականութեան վերեւ
մատնանշուած այն էական առանձնայատիպու-
թիւնները, որոնք տարբերում են նրան թրակա-
ցու քերականութեան եւ միւս հնագոյն թարգ-
մանութիւններից: Այդ ակներեւ տարբերու-
թիւնները նկատելի են նոյն իսկ վերոյիշեալ
հատուածներում: Այսպէս՝ օդյառաւոչ եղըը
թարգմանուած է էլիասի մեկնութեան մէջ՝
բայական, իսկ թրակացու քերականութեան
մէջ՝ բայածական. նմանապէս՝ հակ նախագրու-
թիւնը հակորոշել բայի մէջ (Էլ. 55, 2) յա-
տուկ է, ինչպէս գիտենք, յունաբան երկրորդ
եւ երրորդ շրջանների թարգմանութիւններին,
իսկ թրակացու քերականութեան մէջ, ինչպէս
եւ յունաբան առաջին շրջանի թարգմանու-
թիւններում, այդ նախագրութիւնը դեռ եւս
գործածական չէր: Ինձ թւում է, որ թրակացու
եւ էլիասի թարգմանութեան ինդիրը եւս վեր-
շնականապէս լուծուած պիտի հաւարենք այն
իմաստով, որ այդ թարգմանութիւնները տար-
բեր ժամանակաշրջանների ու տարրեր թարգ-
մանիչների աշխատութիւն են:

4. Էլիասի Ստորոգութեանց մէկնութեան
մէջ, ինչպէս տեսանք (§ 44, 3), Արիստոտէլի
Ստորոգութեանց հայերէն թարգմանութեան
բնագիրն ամբողջովին քաղցւած էր Յամբողիքեան
խմբի հնագոյն թարգմանութիւնից: Կոյն մէկ-
նութեան հայերէն բնագրի քննութիւնը ցոյց է
տալիս, որ Էլիասի թարգմանը ծանօթ է եղել
նաեւ Յամբողիքեան խմբի Արիստոտէլի “Յաղաց
մէկնութեան” գրոց հայերէն թարգմանութեան,
որից նա քաղել է հետեւեալ հատուածը.

Lithuania, 126, 8-11.

Յաղ. մելո., 461

"Իսկ ներում Յաղագս
մեկնութեան բան առնու
զարադիցեալն եւ զնշա-
նականն .քանզի սահմանե-
լով ասէ .եթէ բան է ծայն
նշանական .որոյ մասանցն
իմն նշանակ է զատո: "Բան է ծայն նշանական .
որոյ մասանցն իմն նշա-
նական է զատո:

Արիստոտէլի Վերլուծականքի մեկնութեան
թարգմանը եւս ունի Արիստոտէլի “Յաղագս
մեկնութեան” գրուածքից հատուածներ, սակայն
այդ հատուածները համապատասխան չեն
Յամբղեքեան խմբի թարգմանութեան;

Ակր. մելքն., 574, 21-24. Յաղ. մելքն., 476, 29-31.
 Քանզի Յաղագու մելքն
 նութեան ասէ, թէ Այսու-
 քիկ՝ որպէս ի վերլուծա-
 կանան գոն ասացեալ, նոյն-
 պէ, դասեսցն :

Ակադ. միջն., 574, 21-24. Յաղ. միջն., 476, 29-31.
 Կոկ Ցաղացս մեկնու-
 թեան պյապէս սահմանէ
 զնա ասելով, Տրամաբանա-
 կոն Է Հարցու մն պատսո-
 խանոյ միոյ նախագառու-
 թեան, կամ միոյ մասնա-
 կան Հակասութեան»:

Աշաղբութեան արժանի են այս հա-
տուածներում, զլսաւորապէս, “Նախագասու-
թեան” եւ “առարկելոյն” բառերը, որոնք յու-
նարէն միեւնոյն որոշաւու բառի թարգմանու-
թիւնն են: Առարկութիւն բառը նախագասու-
թեան իմաստով գործ է ածուել նաեւ Աբրի-
էուրիցնուած գրոց մէկնութեան թարգմանութեան
մէջ, տե՛ս 486, 19-20՝ “առանց նախագասու-
թեանց կամ առարկութեանց”:

Առաջին հայեացքից կարող է թուալ, ո՞ր
այդ թարգմանութիւնը վերագրուելու է նոյն
անձին, որը թարգմանել է դաւիթ մեկնիչի նոյն
այդ Ներածութեան Վերլուծութիւնը: Վերլու-
ծութեան թարգմանը Ներածութեան բնագրի
բոլոր մեկնելի հատուածները բառացի ու գրեթե
անփոփոխ քաղել է Հենց այդ թարգմանու-
թիւնից, եւ այն վերջինների յունաբան բառա-
պաշարը, բնականաբար, ազդել է եւ Վերլու-
ծութեան լեզուի վրայ: Հնագոյն ձեռագրերում
այս երկու թարգմանութիւնները գտնւում են
իրար կից՝ նախ՝ Ներածութեան բնագիրը եւ ապա՝
դաւիթ մեկնիչի Վերլուծութիւնը: Այս բոլոր
նշանները, միասին առնուած, տպաւորութիւն
են ստեղծում, իբր նրանք միեւնոյն թարգմանչի
գործ են: Սակայն այս շտամ ու ուկոնն ենթա-

Կութեան դէմ ծագու լ են մի շարք ծանրակշխակածներ, երբ դիմում ենք նրանց յունաբան լեզուի ու քերականութեան մանրախոյդ ու մանրամասն քննութեան: Ուսումնասիրութեան ընթացքում երեւան են գալիս օրանց յունաբան բառամթերքի ու քերականական առանձնայատկութիւնների մէջ լեզուա-քերականական բնորոշ խոտորումներ ու տարածայնութիւններ, որոնք հազիւ թէ որեւէ այլ կերպ բացատրուեն, քան նրանց թարգմանման ժամանակի ու թարգմանների տարբերութեամբ: Ներքեւ առաջ եմ բերում լեզուա-քերականական այդ շեղումներից մի շարք օրինակներ, որոնք յատուկ են զորփիւրի ներածութեան թարգմանութեանը:

1. Ուշադրութեան արժանի են, ամենից առաջ, զորփիւրի ներածութեան թարգմանութեան մէջ յունաբան այն առանձնայատուկ բառերը, որոնք, տարբերուելով դաւիթ-Ոլիմպիոդոսի խմբի միեւնոյն նշանակութիւնն ունեցող բառերից, համապատասխանում են, մեծ մասամբ, նախկին հնագոյն թարգմանութիւնների ուրիշ բառապաշարին: Այդ կարգի բառերիցն են. ա. նորթէթիչու ցնու վերանցեալ սեռ ներ. 231, 4, 232, 14, իսկ գերազանցեալ սեռ դՊօրփ. 284, 26 եւն, 289, (=DPorph. 131, 13 եւն, 137, 9), վերանցեալ ունի Տիմ. Հակ, 86²¹, բ. նորթէթիչու էնծու վայրանցեալ տեսակ ներ. 231, 6, իսկ ի ներքոյ տեսակ դՊօրփ. 295, 19, 296, 7 (=DPorph. 147, 10, 148, 5), Տիմ. Հակ, ունի “զի վայրանցեալն ի ստորագոյն մասունս երկրի ինքն է եւ վերանցեալն գեր զամենայն երկինս” 176, 28-30, վայրանցութիւն 177, 34¹. գ. օչէսու կալումն ներ. 228, 7, բաշազանութիւն դՊօրփ. 273, 35, 295, 26 եւն (=DPorph. 111, 31, 32, 147, 15 եւն), Սահմ. 196, 11, 197, 12, (=DProl. 60, 27, 61, 20), սակայն կալումն դՊօրփ. 331, 18, կալք թր. 32, 7, օչէտիչու ըստ կալման Էլ. 84, 17, 18, 101, 25, 28 (=El. 167, 3, 5, 177, 16, 18). Դ. ուրուղութիւն բազաձական ներ. 233, 17, բակաձական թր. 18, 4, բակաձելով իրեն.

1 Վայրնախագրութեան դորձածութիւնը սովորական է Տիմոթէկոսի Հակածառութեան թարգմանութեան մէջ, որինակ՝ վայրաբուսեալ 143, 17, վայրանցեալ 176, 15, վայրակեալ 213, 17, վայրերթեալ 311, 21, վայրատուեալ 304, 12, վայրաբերեմ 198, 27, վայրիչութիւն 9, 20, 132, 22, եւն, միւս թարգմանութիւններում վայրնախագրութեան գործածութիւնների մէջ է, ունե՛ վայրաբերութիւն պիտի: 424, 9, վայրաբերեալ թիւ. 517, 20, վայրիչութիւն Մեկն Մեկն, ի Վերլ. 588, 18, “վերակնել կամ վայրակնել” 6Պէր. 513, 20:

Ընդ. Հերձ. 168, 5. է. տօ ձնա, տօ չաւա վերին, վայրին ներ. 233, 22, 35, բայց վերին, ներքին Էլ. 135, 8 եւն (=Էլ. 197, 15), որու տօ ձնա, որու տօ չաւա առ վերագոյնն, առ ստորնագոյնն դՊօրփ. 295, 28, 30, 296, 1 (=DPorph. 147, 16, 17, 18). Ն. անաշխատօս հարկաւոր ներ. 227, 3, իսկ կարեւոր դՊօրփ. 267, ծ. պարատաց: յանդիմանակացութիւններ. 250, 23, իսկ պարտապատկան յարկացոյն դՊօրփ. 309, 16, Էլ. 39, 2, նաեւ թր. 22, 14. Ը. պարածուց ընձեռութիւններ. 227, 9, գործ է ածուած, գլխաւորապէս, առաջնին եւ երկրորդ շրջանի յունաբան թարգմանութիւններում Փիլ. Լին. էջ 412, Փիլ. Էլ. 444, իրեն. Ընդդէմ հերձ. 37, ընձեռեմ Պիտ. 341, Ար. Ստ. 364, ՅԱՄ. 411, ՅՊէր. 522, Տիմ. Հակ. 236, 237, իսկ պարածօմաւ յարատրեմ Սահմ. 135, 23 (=DProl. 11, 5), յարատրեմ Սահմ. 135, 23 (=DProl. 11, 5), յարատրեմ Էլ. 153, 10), աւանդեմ, աւանդիւթիւն Էլ. 103, 120 (=El. 178, 188). Բ. իմուռօս իշակէս ներ. 246, 20, 23, իսկ կիսէշ Սահմ. 140, 26 (=Prol. 14, 36). Ճ. տէմնա, ծարքա, տոմի, տմիմա, ծարքա, կոտորեմ 231, 29, 236, 35, 241, 22, կոտորում 233, 20, ծարքադինա կոտորի թր. 21, 14, իսկ հատանեմ, հատած, հատումն, բաժանումն եւն դաւիթ-Ոլիմպիոդոսի խմբի երկերում. Ճ. է՛ս, միա, չայ մու ներ. 233, 15, գործ է ածուած յունաբան առաջնին եւ երկրորդ շերտերի թարգմանութիւններում թր. 8, 15, 21, 29, Փիլ. Լին. 332, Պիտ. 398, 501, 503, 527, Տիմ. Հակաձ. 65, 68, 176, 201 եւն յաճախ, Ար. Պէր. 464, 468, մում 468, 17, մոյր 476, 32 եւն, ՅՊէր. 533, 547 եւն, իսկ դաւիթ-Ոլիմպիոդոսի խմբի երկերում այլեւս չի հանդիպում:

2. Լեզուական այս նկատառումներից անկախ աւելի եւս մեծ կարեւորութիւն ունեն ներածութեան թարգմանութեան քերականական առանձնայատկութիւնները, որոնք ունեն հնութեան պարզ նշաններ, բնորոշ են, մասամբ, միայն այս թարգմանութեան համար եւ գոր-

¹ Վերածութեան մէջ անոյր հարկաւորին, խորթ է թուացել դաւիթ-Ոլիմպիութեան թարգմանչին, “հարկաւոր բառի փոխաւոր մէր” նա գերագասել է գործածել “կարեւոր” բառը, իսկ մէր բայի փոխարէն “գուլ” դՊօրփ. 267: Ուշադրութեան առ ընդ մէջ կարի վայրակների, այսինքն հարկաւորապէս դՊօրփ. 267, 27-28:

ծածական չեն այլեւս դաւթի վերլուծութեան մէջ, ինչպէս եւ դաւթիթ-Ոլիմպիոդորոսի խմբի միւս թարգմանութիւններում:

Դ. Այդ տեսակէտից ուշադրութեան արժանի է, ամէնից առաջ, սեռական հողովի վերջաւորութեան ը տառը, որ գործ է ածուած միայն Ներածութեան բնագրում. օրինակ՝ Ելյու էջ 227, կոչեցելոյր, սեռոյր, ասացելոյր 228, Սոկրատոյր, Պլատոնոյր, մարդոյր, միայնոյր, մարդոյրն 229, եւ նոյն վերջաւորութիւնները կրկնում են շարունակ ամբողջ երկում: Դաւթի վերլուծութեան թարգմանութեան մէջ այդ վերջաւորութիւնները հանդիպում են միայն տեղ՝ Ներածութեան բնագրից քաղուած հատուածներում, բայց ոչ բուն մէկնութեան մէջ չկան նրանք եւ դաւթիթ-Ոլիմպիոդորոսի խմբի միւս թարգմանութիւններում: Թէեւ յունաբան երկերի հրատարակութիւնները գեռեւս գիտական բնոյթ չունեն եւ համեմատութեան չեն առնուած ձեռագրական բոլոր տարրեր ընթերցուածները, բայց որքան եւ ծանօթ եւ հնագոյն ձեռագրերին՝ նրանց մէջ եւս սեռականի արտասովը այդ վերջաւորութիւնները գտնուում են միմիայն Ներածութեան բնագրում: Դժուար է ենթադրել, որ դրանք խմբագրուած ու փոփոխուած լինեն յետագայ ժամանակներում յատկապէս դաւթիթ-Ոլիմպիոդորոսի խմբի երկերում, ուստի հաւանական է թւում ինձ, որ վերոյիշեալ թարգմանութիւնները համարուելու են տարրեր թարգմանիչների աշխատութիւն:

Ե. Ներածութեան թարգմանութեանը յատկ է նաեւ հետեւեալ տառացի դարձուածքը՝ ևն բարձր է տի էստի թարգմանուած է՝ “ի ներում զինչէն” եւ ևն բարձր ծովուն տի էստի “ի ներում որպիսինչէն” Ներ. 229, 230, 244 եւն: Դաւթի վերլուծութեան թարգմանը, քաղելով օտարուի այդ յունաբանութիւնները Ներածութեան բնագրից, ինչը երբեմն փոփոխուում է այդ խրթնաբանութիւնները եւ նոյն եղջները թարգմանում՝ “ի ներ զինչումն” եւ “ի ներ որպիսինչումն” ԳՊՕՐՓ. 256, 288 եւն., իսկ Սահմանաց թարգմանն աւելի եւս հայցուած ձեւով ունի “ի զինչումն” Սահմ. 122, նաեւ ԳՊՕՐՓ. 356: “Աներումն” եւ “ի ներումն” յունաբանութիւնները միւս թարգմանութիւններից եւ ոչ մէկում գործածական չեն. մի անգամ միայն Արիստոտէլի “Յաղագս մեկնութեան” բնագրում պատահում է “Ներում բարոյն” ասացուածքը, որ թւում է աղճա-

տուած կամ կասկածելի (տես Fr. C. Conybeare, Anecdota Oxoniensia, էջ 50:)

Դ. Ինչպէս վերեւ յիշեցի (§ 44, 3): Ներածութեան թարգմանը յունարէն ևն նախդիմաց երկու անդամ միայն գործ է ածել նաեւ “Ս” նախդիրը, որ սովորական էր յունաբան առաջին եւ երկրորդ շերտերի թարգմանութիւններում: Թւում է, որ Ներածութեան բնագրի ունենալով քերականական իրայատուկ կերտումներ, զերծ չէ եղել հնագոյն թարգմանութիւնների անմիջական աղդեցութիւնից՝ ու միայն իր բառապաշարի (§ 47, 1), այլ եւ քերականութեան մէջ: Կրանց փոխադարձ առընչութեան յատկանիշներ կարող են համարուել նաեւ արուեստական յունաբանութիւնների ու քերականական անհարազատ ձեւերի հետեւեալ օրինակները. 1. օ՛ խառն մէրօս ըստամանեայքն Ներ. 233, 12, 233, 11, 245, 20, զըստամանէցն Ներ. 240, 13, 14, ի մամնէքն իրեն. Ըստ. Հերձ. 31, միլստմորէցն Ներ. 244, 30, Փիլ Լին. 74, ըստ միորէքն Տիմ. Հակ. 182, 5, ըստ միորէցն Տիմ. 6, 3, ըստ բոլորէցն Ար. Պէր. 466, 24, զայլմէց Ար. Պէր. 463, 18, 22 եւն. 2. օ՛ խաջ՝ չչաստոն ըստիւրաքնէւրքն Ներ. 233, 13, Ար. Ստոր. 394, իսկ իրաքանչիւրքն ԳՊՕՐՓ. 290, 11, 12 (= DPOrgph. 138, 26, 27). 3. τὰ ὑπάλληλα Ընդմիմեամբքն Ներ. 232, 18, 22, 234, 3, 4, ԳՊՕՐՓ. 294, 37, 297, 27, Էլ. 77, 26, 79, Ար. Ստ. 361, 7, 4. խաջ՝ անτօ ըստինքնան Ներ. 235, 25, 36, զըստկիեանն Տիմ. Հակ. 114, զըստինքեանն Տիմ. Հակ. 164, 11, Էլ. 81, 5. մասինցն, առաջինցն Ներ. 234, 19, 232, 37, “Երկնայինց եւ աստուածայիցն” Փիլ. Լին, էջ 416, անձինցն Ար. Պէր. 461 եւն:

3. Ներածութեան հայերէն բնագրի լեզուածքերականական հետազոտութիւնն անհրաժեշտ է աւելի եւս խորացնել. համեմատելով հայերէնը յունարէն բնագրի հետ¹: Բայց կարծում եմ, որ վերոյիշեալ դիտողութիւններն անդամ հիմք են տալիս ենթագրելու, որ այս գրուածքը թարգմանուած պիտի լինի դաւթիթ-Ոլիմպիոդորոսի խմբի երկերից առաջ հաւանաբար, յունաբան երկրորդ շերտի թարգմանութիւնների ժամանակաշրջանում: Դաւթի Վ. Իրուծութեան թարգմանը ոչ թէ ինքն է թարգ-

¹ Յունարէն հրատարակութիւնն իրերիս հետ թարգմանուեցի աւերածութիւնների ժամանակ, եւ այժմ, դիրքախտաբար, չունենալու իրացրի վերջական ըստամանական համար, բայց անդամ համար աշխատութեան համար:

մանել այդ բնագիրը, այլ, ըստ երեւոյթին, օգտուել է արդէն գյուղիւն ունեցող նախնագին թարգմանութիւնից: Նոյնը տեղի է ունեցել եւ Թրակացու քերականութեան հետ, որի թարգմանութիւնը յունաբան ռոտղին շրջանի աշխատութիւն է, մինչդեռ դաւիթ քերականի մեկնութիւնը, ինչպէս կը տեսնեմք, աւելիուշ ժամանակի եւ յունաբան այլ շերտի արտադրութիւն է:

ՊՐՈՓ. 8. ՄԱՅՍԻԴԵԱՆ

ԵՐԵՒԱՆ:

(ԾԱՐՈՒԱԱԿՐՈՅԴԻՒՆ)



ԽԱՅՑԵՄ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷջ (ԾԱՐՈՒԱԱԿՐՈՅԴԻՒՆ)

ԺԵ.

ՀԱՅԱԳԻՒԹԱՍԱՆԵՐՈՅ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ ԱՅԼԱՊՊԵԱԳ¹:

ՈՐ ՂՀԱՅՂԵՆՍ ՌԵ ՊԵՏԵՆ:
Եւ նախ գիտելի է զի երեք իր ու պղծի՝
մէկ² լեզուն թէ ընդ այլազգիս խօսի. երկորդ՝
ձեռքն. թէպէտ զանսուրբ կենդանիս՝ ըմբունէ³.
երրորդ՝ սուրն զանազան իր հատեալ՝ ու պղծի⁴:

ԱՐԴ՝ հարցանեմ զձեզ. ձեռն սուրբ եւ
դանակն սուրբ, զի՞ն. որ է պղծէ զկենդանին:
Ասեն թէ յանուն Հօր⁵ եւ Արդի եւ Հոգի՝
թէ զԱստուած անուանեմք թէ զայլ ոք: Ասեն նաքա
Աստուած անուանեմք թէ զայլ ոք: Ասեն նաքա
Ասեմք ապա դուք ընդէր ասէք, ըստ նամի
հնուտա, բամիլա ուահման ու ուահիլ: Աչա⁶
եւ դուք զերրորդութեան՝ անուն յիշեցիք. եւ
թէպէտ դուք ի լեզուս ձեր բա նամի ինուտա
ասէք, եւ մեք ի մերս յանուն Աստուծոյ, ու պղծի զանազան լեզուս: ԱՐԴ՝ հարցանեմ թէ ի

ձեր լեզուդ ասէք բամիլա ի վերայ անսուրբ
կենդանոյ, որպէս արջոյ կամ գայլը, եւ զենուք
զնա, սրբի թէ ոչ. թէ սրբի, ընդէր դուք զա-
մենայն կենդանիս այսպէս ոչ զենուք եւ ուտէք:
Եւ թէ ասեն ոչ սրբի. ‘ասեմք’ թէ որպէս
ըսմիլայն զպիղծ կենդանին ոչ սրբէ, նոյնպէս
Հայր եւ Արդի եւ Հոգին² զսուրբ կենդանին ոչ
պղծէ: ‘Ապա ուրեմն ոչ է խոտելի³ Քրիստոնէից
զենեալն:

[ա] Եւ թէ ասեն. վասն զի դուք, ‘անթլփիատ⁴
էք, ասեմք. եթէ անթլփիատի⁵ զենուքն պիղծ է,
Հայրն Աբրահամ, գեռ եւս անթլփիատ գոլով,
Հրամայեաց Աստուած առնուլ ոչխար ‘երեմեան⁶
եւ արջառ եւ նոխալ, եւ տատրակ եւ աղաւնի,
եւ պատարագեաց. եւ ընդ երեկս ետես ‘զԱս-
տուած⁷, միթէ ոչ եղեւ ընդունելի⁸:

Եւ այլ՝ յառաջ⁹, նոյ ‘յորժամ’¹⁰ ելի տա-
պանէն եւ ի սուրբ կենդանեացն պատարագեաց
եւ ընկալաւ Աստուած: Նոյնպէս եւ զԱմբելի պա-
տարագն ընկալաւ Աստուած հրով¹¹: Եւ արդ՝
զի՞ն ասէք. պիղծ էր նոցա զենմունքն, ‘զի եւ
նոքա անթլփիատը էին¹²:

Եւ թէ ասեն. յայնժամ գեռ եւս ոչ եր
ուխտ թլփիատութեան. ասեմք թէ յայնժամ ոչ
էր ուխտ թլփիատութեան, եւ այժմ բարձեալ է
ուխտն այն, եւ մեծագոյն ուխտ տուեալ մեզ՝
Քրիստոս: Եւ որպէս նոցա զենմունքն սուրբ էր որ
անթլփիատը էին. Նոյնպէս եւ ‘մեր¹³ սուրբ եղիցի:

‘ԱՅԼ եւ ի Տմշն¹⁴ մեծ քաղաքն ձեր ոչ են
առնի տաճիկ քան զձեզ. որ ‘զղենմունքն¹⁵ Քրիս-

1. Ա. ‘Համայն:

2. Ա. ‘Հոգին Առուբ:

3. Ա. ‘Շէ ուրիմ խոսելի:

[ա] Աստուած. այդպէս նշանակուած հասուածներ Ա. Ե
մէջ հոս են, աւելի նաև կարգով:

4. Ա. ‘անթլփիատ:

5. Ա. ‘անթլփիատի:

6. Ա. ‘եռամաման:

7. Ա. ‘Աստուած:

8. Ա. ունի. ԱՅԼ եւ քառասուն ամեն յանապատին
ժաղվուրդուն անթլփիատը էին, եւ զայն ամենայն զենմունք
եւ պատարագ յատուցին Աստուած, միթէ ոչ եղեւ ըն-
դունելի:

9. Ա. ‘յառաջ:

10. Պականէ Ը. Ն. Կ:

11. Ա. ‘Հովով ընկալաւ:

12. Ինչպէս որ կը տեսնեմի. Ա. Ի. մէջ տեղափոխուած է
այս նախագամանութիւնը:

13. Ա. ‘մերս:

14. Ա. ունի. ԱՅԼ եւ Մահմետն ձեր գրեալ եւ ա-
ւանդեալ՝ թէ յար վար որ իցէ հայ մարդ, զամենայն զեն-

մունքն նա տանէ, եւ հալալ է. եւ թէ ֆարսանդ մի հեռի
ի յար կողմանց ոչ իցէ քրիստոնեաց, տպա տաճիկն զենցէ:

Ապա եթէ դուք ուրանացք զայն եւ ծածկէք, այլ

ի դժին:

15. Ա. ‘զամենայն զենմունքն:

1. Ա. ‘Տաճիկ:

2. Ա. ‘Համայն:

3. Ա. ‘Ամբունեն:

4. Ա. ‘Ամբունեն:

5. Ա. ‘Ամբունեն:

6. Գերոյ ասացա: Քարձեալ: